

ԲԱՆԱԾՈՒԲԱԿԱՆ

Ս Ե Ղ Ա Ն Ա Ի Բ Հ Ն Է Ք

Ի Յ Ա Ռ Ա Ք Ե Լ Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Է Ա Ս Ա Յ Ե Ա Լ



Անտիպ Սեղանորհնէքս 4ը գտնուի այն Ոսկեփորիկին մէջ, $[14\frac{1}{2} \times 10,8 (9\frac{1}{2} \times 7,6)]$ ուր կար վերջին ստացողին կնիքը՝ ՌՃԻԲ ԹԸ-ւականով, ինչպէս յիշատակեցինք Քազմավիպի նախորդ թուոյն մէջ (տես էջ 258): Կը ներկայաւնայ մեզ Առաքել վարդապետի անուամբ, ինչպէս գլխատառք ալ կը կազմեն «Այս Առաքել վարդապետի», սակայն պէտք է որ Սիւնեցւոյն ըլլայ քան Քաղիչեցւոյն կամ այլ նոյնանուն անձի մը գրութիւն: Ասոր իբր հաստատութիւն կրնայ ծառայել նաև «Սիւնեաց» բառին յիշատակութիւնը, որուն կը հանդիպինք երկու գրուածքներ անդին ուրիշ վերնագրի մը մէջ, որ այս է «Յիշատակարան Աստուածայունէլ ցրոց ի տէր Առաքելի Դիտողի Սիւնեաց»:

Որքան որ գրական մեն արժէք մը չներկայացնէ, բայց անշուշտ շահեկան ըլլալէ պիտի չզարդի բանասիրաց առջև: Վերնագրերը ի սկզբան կարծել պիտի տայ, որ ծիսական բնոյթ ունենայ. բայց հազիւ սկսինք կարդալ՝ պիտի հետեցնենք թէ հեղինակը պէտք է որ կոչուեալ մ'առթիւ չինած ըլլայ, ինչպէս որ արդի ժամանակներուս անսովոր չեն թուիր պատրաստել սոյնպիսի գրութիւններ, կամ յանկարծաբանութիւններ ընել՝ խնջողքի և ուրախ ընկերային սեղանակցութեանց առթիւ:

Հ. Ղ. Տ.

Աւրհնեացուք մեր միաբան
Բզայր և զորդի և զսուրբ Հոգին,
Որ բարեացն է պարգեւիչ,
Զոր վայելեն ազգ մարդկային:

Յառաջ աւրհնեմք զտան տանուէրս,
Որ զմեզ կոչեաց ի միասին,
Եւ զսեղանս զարդարեաց
Եւ պատրաստեաց զանոյշ գինին:

Սեղանըն քո աւրհնեալ լիցի
Ի հայրական աշոյն վերին,
Որ զժողովուրդն խորայնի
Նա կերակրեաց յանապատին:

Այն որ զհացն առատացոյց
Յիսուս Քրիստոս Աստուածորդին,
Զհինկն նկանակն բազմացոյց
Քաշխեալ ետար հինգ հազարին:

Ռեւոյն կենաց ձեզ պարգ(և)է,
Զանճառ սեղանն իւր գերկնային,
Յաստ ի բարիս քո աւելցէ
Որ յանսպառ մշտ եղիցին:

Այն որ ի տան մաքսաւորին,
Ելժող զմեզս Զաքէոսին
Զձեզ ի մեղաց նա ազատէ,
Աւրհնէ զսեղանս բարեօք ի լին:

Քեզ հովանի աշն Անհղին
Եւ քո սեղանն չպակասին,
Որպէս ձեռամբն Եղիային
Առ Սարեփթայ Սիդոնացին:

Եւ զբաժակն ի վերնատունն,
Աւրհնեաց լեռնոր աւրհնեալ զընդին,
Աւրհնէ զգինին ձեր ամանօք,
Զոր որք ըմպեն ուրախացին:

Լրցցի կարասըն ձեր գինով,
Շնորհօք աշոյ թագաւորին,
Որպէս երբեմն ի հարսանիսն
Որ ի կանայ Գալիլէին:

Ինքն որ աւրհնեաց զհայրն Աբրահամ,
Եւ բազմացոյց զզաւակ նորին,

Աւրհնէ զորդիս ձեր մարմնաւոր,
Եւ զկողակիցդ ընդ Սառային:

Վարդապետն յարարածոց
Զձեզ աւրհնէ զամենեանն,
Զքահանայքդ հաւասար
Եւ զժողովուրդդ ի միասին:

Այն որ զաշխարհ զամէն ստեղծեաց
Եւ վայելել ետ մարդկային,
Նոյն աւրհնութիւնն աստուածային
Իջցէ ի տունս այս զ(ե)րասին:

Իսմից էից Տէրն երկնային,
Զձեզ պահէ յիւր հովանին,
Աստէն ուրախ առնէ մարմնով
Եւ անդ հոգ(ւ)ով (յ)անճառ բարին:

Դանք հր(ե)շտակացն աստուածային՝
Զեզ պահապան միշտ եղիցին.
Եւ թշնամիք ձեր կործանին,
Թէ մարմնաւոր թէ անմարմին:

Աջն երկնաւոր թագաւորին
Որ տարածեաց ի սուրբ խաչին
Աւրհնէ զտունս եւ զժողովուրդս
Առ հասարակ բարեօք ի լին:

Պարզեատուն ամենայնի
Որ կերակրեաց զամ(են)եանի,
Զտանս բարիքն առատ առնէ
Ազաչանօք Աստուածածնին:

Եւ զնշեցեալսն հաւասար
Որք (յ)աշխարհէ աստի գնացին,
Յանճառելի խորանս հանգչին,
Եւ դասակից սրբոց լինին:

Տեառն Աստուծոյ արժան (ասցին)
Յաւուր մեծի դատաստանին,
Լըսել զձայնն երանաւետ
Յաջակողմեան դասն խառնին:

Ի միասին զԱստուած աւրհնեմք
ԶՀայր եւ զՈրդին եւ սուրբ զՀոգին,
Եւ ասասցուք ամենեքին
Ի մի բերան Հայր մեր յերկին:

ՎԱՀԱՆ ՏԵՐԵԱՆ



Քնարերգութիւնը գերազանցապէս հոգեվիշաւակներու ճշմարիտ արտայայտութիւնն է: Վահան Տէրեանի արուեստը կը կայանայ իր յուզումներուն եւ խորունկ զգայնականութեանը մէջ, եւ այս վշտահար բանաստեղծին քնարը պայմանադրական ոչինչ ունի, ոչինչ արհեստական եւ մանաւանդ ոչինչ բռնազգեստիկ ու կեղծ: Վահանը որուն կ'ենթարկուէր անոր հոգին, ճշմարիտ ոգեկոչումն էր անցեալի ժպտներուն եւ սրտաւետ արցունքներուն, որոնց եղբայրական խորհուրդը կայ միշտ ամէն անխառն հրճուանքի եւ տարօրէն վաղանցուկ հաճոյքի թունաւոր ծաղիկներուն մէջ:

Տեսլապաշտ մըն էր ան, որուն համար կենաքը իր բովանդակ ճամբաներուն վրայ Յիշատակին ուրուանոյշ պատկերները ցուցադրեց: Անցեալին թունալից քաղցրութիւնը՝ որուն բազմաբանդակ բերեղը փշրուած էր իր շրթներուն դէմ, աւելի կ'արժէր անոր համար՝ քան երազուած նեկտարը բոլոր անկարծելի եւ տարաշխարհիկ շուշաններուն: Մենք տեսանք թէ ինչպէս անոր հոգեվիշաւակներութիւնը մինչեւ անաղագստի խորհրդաւոր սահմանները կ'անցնէր, եւ զեղեցկին պաշտամունքը անոր տառապանքին մէջ տեսլապաշտ ֆաբրիկ մը յափշտակութիւնն եւ զգայախաբուումը կ'ըլլար միանգամայն՝ Երբ ան կը սիրէր գուշակել ուրուականներու բալածիգ էութիւնը իր բոլոր սիրած մարմիններուն ընդմէջէն, միեւնոյն ատեն տառապանքնոյ նիւթին շուրջափումը եւ զեղեցկին յաւերժական փախուստը կը զգար իր լուսեղէն եւ տօգոյն մատնիկներուն տակ: Յաւիտենական թախիծն էր ասիկա, որուն քաղցր թոյնը չսպառեցաւ երբեք Յոյսին բաժաններուն մէջ իսկ, ու բանաստեղծը համակերպ եւ անտրտունը՝ (որովհետեւ իր տրտունը այնքան մեղմիկ է, որքան գեփիւրին գգուանքն վէտվէտուն լիճի մը տրտմութիւնը միմեկին վիշտերուն կախարդանքը փնտռեց: Այժմ ինչ անսահման դաւթանք էր այն ատեն, երբ ցաւերը կը ծաղկեցնէին երգերու ամբողջ պարտէզ մը հոգիներու կապոյտ աշխարհին մէջ, երբ Աստուծոյ կը ժպտէր՝ Լոյսին շրթունքներուն վրայ իր անոյշ մահը գտնելով...

Քնութեան պատկերներուն եւ իր հոգեկան աշխարհը շրջանի վերջին քանի մը թիւերը.

1. Տեսնել ֆարիգ հրատարակուող «Վերածնունդ»-ն նախորդ շրջանի վերջին քանի մը թիւերը.